

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՐԷ



Երկուշաբթի, 18 Ապրիլ 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ Սուրիոյ Հանրապետութեան պետական հարցերու Նախարար Մանսուր Ազգամին միջոցաւ, Սուրիոյ մէջ արեւմտեան օրացոյցին հետեւող քրիստոնեայ համայնքները շնորհաւորեց՝ Ս. Յարութեան տօնին առիթով, անոնց մաղթելով քաջամոռոջութիւն եւ խաղաղութիւն:

Իրենց կարգին, քրիստոնեայ համայնքապետները շնորհակալութիւն յայտնեցին Նախագահ Ասատին, մաղթելով Նախագահին եւ

Շար.՝ Էջ 2 >

## ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ԿՈՂՔԻՆ, ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ՌԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱԽՐԱԳԻՐ ՅՂԵՅԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻՆ՝ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 17 Ապրիլ 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Անկախութեան տօնին առիթով, արաբական եւ եւրոպական երկիրներու Նախագահներ շնորհաւորագիրներ յղեցին Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատին, մաղթելով Սուրիոյ յաղթանակ եւ բարգաւաճում: Արդարեւ, Նախագահ Ասատ շնորհաւորագիր ստացաւ Օմանի Սուլթանէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Մորիթանիոյ Նախագահներէն,



Շար.՝ Էջ 2 >

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Ս. ԶԱՏԿՈՒԲԱՆ ՊԱՏԳԱՄԸ. ՅԱՐՈՒՑԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԱԸ ԱՊՐԻՒՆ ԻԲՐԵԷ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԵՑՈՅՑ

Քրիստոսի հետ ապրած, անոր երկրաւոր կեանքի բոլոր դրուագներուն հաղորդակից դարձած, անոր ուսուցումները լսած ու հրաշքներուն ականատես եղած աշակերտներուն համար խորապէս ցնցիչ դէպք մըն էր Քրիստոսի Յարութեան օրը: Անոնք տակաւին չէին կրցած լիովին ըմբռնել Յարութեան խորհուրդը: Յարութեան դէպքէն որոշ ժամանակ ետք միայն առաքելները սկսան հասկնալ ու Քրիստոսի հետեւորդներուն բացատրել Յարութեան դէպքին իւրայատուկ նշանակութիւնը՝ յատկապէս շէշտելով անոր առանցքային կարեւորութիւնը քրիստոնեայ մարդու կեանքին մէջ եւ կոչ ուղղելով ապրելու Յարութեան խորհուրդն ու իմաստը:



Քրիստոսի Յարութեան խորհուրդով օծուն այս օրերուն, անհրաժեշտ է հետեւեալ կարեւոր Յիշեցումները կատարել.

- Քրիստոսի յարութիւնը՝ հիմքն է մեր հաւատքին: Պօղոս առաքեալ շէշտակիօրէն կը հաստատէ եւ կը յիշեցնէ Նորադարձ քրիստոնեաներուն, թէ՛ եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, մեր հաւատքը պիտի կորսնցնէր իր հիմքն ու իմաստը (Կր 15. 13): Յարութիւնն էր, որ Աստուծոյ Որդւոյն ուսուցումներուն ու հրաշքներուն եւ ընդհանրապէս անոր երկրաւոր առաքելութեան իմաստն ու Նպատակը պարզեց: Արդ, առանց Յարութեան կարելի

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
 Սուրբ 2-րդ տարի 2022  
 Անթիլիաս, Լիբանան  
 Շար.՝ Էջ 2 >

## ՍՈՒՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՇՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի 17 Ապրիլ 2022-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ մատուցեց եւ Սուրբ Յարութեան



տօնի պատգամը հաւատացեալներուն ուղղեց՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, Հալէպի Սրբ. Բառասից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ:

Պատարագին ներկայ էին ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական մեծարգոյ Բարգէն Պաթալեան, Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան տիար Ժիրայր Ռէիսեան, Ազգ. Վարչութեան ատենապետ մերթ Սունայուլ Սունայուլեան, Ազգ. Վարչութեան անդամներ, ազգային գործիչ

տիար Վրէժ Եագուպեան, ազգային մարմիններու, մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու խումներամ բազմութիւն:



ՀԱԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի փողերախումբը, եկեղեցւոյ մուտքին, Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները նուագելով տօնական մթնոլորտ ստեղծեց: Այնուհետեւ Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսաւոր թափօրով եւ դպրաց դասի «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց եկեղեցի:

Ս. Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հօր՝ որպէս առընթերականեր սպասաւորեցին Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չերենցեան եւ Արժ. Տ.

Շար.՝ Էջ 4 >

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ...

Սկիզբ՝ էջ 1

չէ հասկնալ Զրիստոսի մարդեղութիւնը եւ մարդու փրկութիւնը, որուն համար աշխարհ եկած էր Աստուծոյ Որդին:

- Զրիստոսի Յարութիւնը՝ յաղթանակն է կեանքին: Կեանքը՝ Աստուծոյ պարգեւը մարդուն, ապականած էր Ադամի մեղքով եւ անոր յաջորդող սերունդներուն մարդակերպ կենցաղակերպով: Աստուծոյ Որդին աշխարհ եկած էր այլափոխելու մեղքով ու ապականութեամբ շաղախուած մարդու կեանքը, եւ զինք օժտելու նոր կեանքով: Իր խաչով ու Յարութեամբ Զրիստոս յաղթեց մահուան եւ մարդուն պարգեւեց աստուածատուր կեանքը վերստին ապրելու շնորհքը: Զրիստոսի Յարութեամբ, մարդը զինուեցաւ մահէն դէպի կեանք ընթանալու հաւատքի ու յոյսի գործութեամբ: Առաքելը կը վկայէ, թէ Աստուած մարդը «վերստին կեանքի կոչեց Զրիստոսով» (Եփ 2.5): Նոյն առաքելը նաեւ կը հաստատէ, թէ իրեն համար կեանքը Զրիստոսն է:

- Զրիստոսի Յարութիւնը՝ հրաւեր է Աստուծոյ հետ հաշտութեան: Աստուած առաջին մարդը իրեն գործակից նշանակած էր, զինք օժտելով բանականութեամբ ու կամքի ազատութեամբ, եւ անոր տալով տիեզերքը կառավարելու եւ առաւել հարստացնելու պարտականութիւնը: Սակայն, մարդը հաւատարիմ չէր գտնուած իր կոչումին եւ հեռացած՝ Աստուծմէ: Աստուծոյ Որդին իր մարդեղութեամբ ու առաքելութեամբ մարդը մօտեցուց Աստուծոյ եւ Հայր եւ Որդի փոխյարաբերութեան ուխտը կնքեց Աստուծոյ եւ մարդուն միջեւ. առաքելալի բառերով՝ «Աստուած իր Որդիին մահով մեզ իրեն հետ հաշտեցուց» (Յո 5.10): Առաքելը ապա կոչ կ'ուղղէ ըսելով՝ «հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ, որովհետեւ Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Զրիստոսը» (Բ. Կր 5.20-21):

- Զրիստոսի Յարութիւնը՝ ճանապարհ է փրկութեան: Զրիստոսի առաքելութեան նպատակը անկեալ մարդուն փրկութիւնն էր, անառակացած մարդուն վերադարձը իր երկնաւոր Հօր, մահացած մարդուն նոր կեանք պարգեւել էր: Խաչի գործութեամբ ու Յարութեան յաղթանակով Զրիստոս մարդուն առջեւ բացաւ փրկութեան ճանապարհը: Պօղոս առաքել իր կեանքի փորձառութեամբ կը վկայէ, թէ՛ «պիտի փրկուինք Զրիստոսի կեանքով» (Յո 5.10):

Արդ, քրիստոնէայ մարդը կոչուած է ո՛չ միայն Զրիստոսը դաւանելու իբրեւ միակ Փրկիչը աշխարհին, այլ՝ մարդուն համար խաչով յարութիւն կերտած յարուցեալ Զրիստոսը ապրելու: Առաքելը կը հաստատէ՝ «ինձի համար կեանքը Զրիստոսն է» (Փլմ 1.21) եւ կ'աւելցնէ՝ «ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Զրիստոսն է որ կ'ապրի իմ մէջս» (Գղ 2.20):

Ի՞նչ կը նշանակէ Զրիստոսը ապրի՞լ՝ իբրեւ կեանքի ուղեցոյց ու նպատակ:

Զրիստոսը ապրի՞լ՝ հաւատարիմ ըլլալով Աստուածաշունչին, անոր ուսուցումներուն ու արժէքներուն:

Զրիստոսը ապրի՞լ՝ զինք մեր մտածումներուն ու գործերուն առանցքը դարձնելով:

Զրիստոսը ապրի՞լ՝ օգնելով կարիքաւորին ու գրկեալին եւ ծառայելով ուրիշին:

Զրիստոսը ապրի՞լ իբրեւ «ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք», ինչպէս Զրիստոս բնութագրեց ինքզինքը (Յո 14.6):

Ա՛յս է քրիստոնէայ ըլլալու ճշմարիտ կերպը, ճի՛շդ ճամբան:

Կ'ապրինք չարով ու չարիքներով լեցուն աշխարհի մը մէջ: Շրջապատուած ենք մարդու կեանքէն Աստուծոյ ներկայութիւնը հեռացնող տեսանելի եւ անտեսանելի երեւոյթներով: Բազմաթիւ դժուարութիւններով տիրապետուած է մեր կեանքը: Չմոռնանք առաքելալի յիշեցումը, թէ «Զրիստոս իր անձը տուաւ մեր մեղքերուն համար, որպէսզի Աստուծոյ՝ մեր Հօրը կամքով մեզ ազատէ ներկայ չար աշխարհէն» (Գղ 1.4): Արդ, ներկայ ժամանակներու դառն պայմաններուն դիմաց, պէտք է զինուինք Զրիստոսի Յարութեան հաւատքով ու յոյսով: Ներկայ փոթորկայոյց աշխարհին մէջ Զրիստոսը պէտք է ապրինք, իբրեւ մեր կեանքին միակ ուղեցոյցն ու ապաւենը: Ա՛յս է Զրիստոսի թափուր գերեզմանէն հնչող պատգամը:

\*\*\*

Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Յարութեան տօնին առիթով, եղբայրական շքեմ սիրով կ'ողջունենք ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը, մաղթելով եկեղեցաշէն իրագործումներով երկար գահակալութիւն: Կ'ողջունենք նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Թուրքիոյ հայոց պատրիարք Ամենապատիւ Ս. Սահակ արք. Մաշալեանը՝ իրենց մաղթելով բեղմնաւոր ծառայութիւն հայ եկեղեցւոյ անդամներուն ներս:

Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդները, հոգեւոր դասը, Ազգային իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթենք առ Աստուած, որ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Հայաստանն ու Արցախը եւ մեր ազգին սիրելի գաւակները, որպէսզի կարենանք յարուցեալ Փրկիչին յաղթանակով հզօրացած վերանորոգել մեր կեանքը եւ դիմագրաւել ներկայ ժամանակներու բազմազան մարտահրաւերները:

**ԶՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ,  
ՕՐՀՆԵԱԼ Ե ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶՐԻՍՏՈՍ:**

## ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

### -ԶԱՆԵՐԹ-

Ուրբաթ, 22 Ապրիլ 2022-ին, կէսօրէ ետք ժամը 6:00-ին:  
Նաաթ՝ Ա. Մանուկեան Ժ. Տան դիմաց: Զահերով երթը պիտի կատարուի Ա. Մանուկեան Ժ. Տունէն մինչեւ Ազգ. Գերեզմանապարտ:

## -ՄԻՋՅԱՐԱՆՈՒՄՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՆՎՆԴԷՍ-

Շաբաթ, 23 Ապրիլ 2022-ի երեկոյեան, Նայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Աղաճանեան» սրահէն ներս:

## -ԱՐԵԱՆ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ-

Կիրակի, 24 Ապրիլ 2022-ին, առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ մինչեւ կէսօր, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

## -ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՆ ՊԱՏԱՐԱԳ-

Կիրակի, 24 Ապրիլ 2022-ի առաւօտուն, Ազգ. Գերեզմանապարտ մէջ: Պատարագէն ետք տեղի պիտի ունենայ ծաղկեմարտոյց, Ազգ. Գերեզմանապարտ մէջ գրնուող Նայոց Յեղասպանութեան սրբադասուած նահապալկներու յուշակոթողին առջեւ:

## -ՄԻՋՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ՆԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ-

Կիրակի, 24 Ապրիլ 2022-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս:

## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1

անոր ընտանիքին քաջամոռոջութիւն եւ ուժ: Անոնք շեշտեցին, որ Սուրբիոյ ժողովուրդը իր անողով պայքարով եւ սուրիական բանակին ձեռքբերումներով՝ Սուրբիոյ ամբողջական ազատագրումը պիտի իրականացնէ:

Հալէպի մէջ եւս պետական աւագանին, այցելելով քրիստոնէայ համայնքապետներուն, շնորհաւորեց Ս. Յարութեան տօնը եւ նախագահին շքեմ բարեմաղթութիւնները փոխանցեց անոնց:

## ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ...

Սկիզբ՝ էջ 1

ինչպէս նաեւ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինէն, Չինաստանի նախագահ Շի Ճին Պինկէն, Հնդկաստանի նախագահ Ռամ Նաւ Զովենտէն, Հարաւային Զորեայի նախագահ Զիմ Եոնկ Ունէն, Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիէն, Հարաւային Ափրիկէի, Պելառուսի, Սերբիայի, Թուրքմենիստանի, Թայլանտի եւ Մալիզիոյ նախագահներէն: Նախագահ Ասատ շնորհաւորագիր ստացաւ նաեւ Վատիկանի մէջ Ֆրանչիսկոս Պապէն, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատրեանէն եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանէն:



Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-ՀՄԸՄ-ի տղոց խումբն Գոգո Չգուշեան եւ ՅԵԸ-ի կազմէն ճորճ Գալաճեան հրաւիրուեցան Սուրիոյ պասքեթի Ս 16-ի հաւաքականի ուսումնամարզական հաւաքին: Եռօրեայ փորձերու ավարտին զոյգ խաղացողները մաս կազմեցին հիմնական 16 խաղացողներու ցանկին:

-Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան մրցումներուն, Դամասկոսի մէջ կայացած Ուահտէ ընդդէմ Թշրին հանդիպումը 27-րդ վայրկեանին դադրեցաւ, որովհետեւ Ուահտէի խաղացողները մերժելով իրաւարարին երկրորդ տուգանային հարուածի որոշումը, դուրս եկան դաշտէն: Աւելցնենք, որ ֆութպոլի ժամանակաւոր դաշնութիւնը իր հերթական ժողովին 3-0 արդիւնքով պարտական նկատեց Ուահտէն, ինչպէս նաեւ մէկ տարիով կախակայեց անոր խումբի պատասխանատուն:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՅԵՐՆ ՄԻՆԵՆ ԶԵՆՔ ԲԵՐԵԼ Կ'ՈՒՉԷ ՊԱՐՍԵԼՈՍԱՅԻ ԿԱԻՆ

Mundo Deportivo-ն յայտարարեց, որ Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնխէն մտադիր է ձեռք բերել քաթալոնեական Պարսելոնա խումբի կիսապաշտպան 17-ամեայ Կալին: Ըստ թերթին, քաթալոնեական ակումբը տակաւին Կալիի հետ Նոր պայմանագրութիւն ստորագրելու համար համաձայնութեան չէ հասած: Անոր ժամանակաշրջանը կ'աւարտի յառաջիկայ տարի: Աւելցնենք, որ Պարսելոնա անցեալ տարուան Դեկտեմբերին առաջարկած էր երկարաձգել Կալիի պայմանագրութիւնը, բայց մինչ օրս տակաւին ո՛չ մէկ դրական պատասխան ստացած է սպանացի մարզիկէն: Սպանիոյ ընթացիկ ախոյեանութեան՝ Կալին մաս կազմած է 25 մրցումի, նշանակած է երկու կոլ եւ կատարած չորս կոլերու փոխանցում:



### ՓԵՐԷՉՆ ՈՒ ԱՆՉԵԼՈՒՆ ԶՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՆԵՐՁԱՆԸ

Ըստ Marca օրաթերթին, Սպանիոյ մայրաքաղաք Ռեալ Մատրիտի նախագահ Ֆլորենթինո Փերեզն ու խումբի մարզիչ Գարլո Անչելոթին ընկերակցած են խումբի ամառնային փոխադրաշրջանը: Անչելոթին կը մտադրէ պաշտպանութեան եւ կիսապաշտպանութեան Նոր խաղացողներ ունենալ, որովհետեւ ըստ յայտարարուած տեղեկութիւններուն, ակումբը մտադիր է դուրս դնել պրագիլի խաղացող Մարսելոն եւ Ուելզի կիսապաշտպան Քարիէթ Պելլը: Վաճառքի ցանկին մէջ է նաեւ սպանացի կիսապաշտպան Իսքոս եւ յարձակող Մարգո Ասենսիոն: Այս 4 խաղացողներու հեռացումէն ետք, Ռեալի ղեկավարութիւնը Նոր խաղացողներու հետ պայմանագրութիւն կնքելու համար տրամադրած է 100 միլիոն եւրո:



Մատրիտեան ակումբը հետաքրքրուած է Մոնաքոյի ֆրանսացի կիսապաշտպան Օրելիէն Տչուամենիի ծառայութիւններով: Գլխաւոր խումբի փորձերուն արդէն իսկ սկսած են մաս կազմել Ռեալի երիտասարդական կազմէն Անթոնիոյ Փլանկոնը, Ռաֆա Մարինը, Պրոնս Իլլեսիասը, Ալեքս Խիմենսը եւ Մարվելը: Անոնք յառաջիկայ մրցաշրջանին կրնան մաս կազմել հիմնական խումբին: Յարձակման գիծի վրայ նկատի առնուած է ֆրանսացի Զիլեան Մպափիլէն, որ ամրան ազատ վիճակով պիտի միանայ արքայական խումբին:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻՆ 387)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոջեան-Պօղիկեան  
Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■				■		■			■	
3					■					■		■
4		■			■							
5					■							
6		■										
7				■				■				
8		■					■					
9			■							■		
10												
11												
12	■											

### Հորիզոնական

1. Զետեւեալ խօսքին հեղինակը. «Մեր մեռելները հեռու-հեռու անապատներու մէջ են եւ անոնք մեզմէ ծաղիկ չեն սպասեր, այլ՝ ոճրապարտ գանկերու արիւնը»:
2. Ճամբայ: Յոգնակերտ մասնիկ:
3. Անգոր: Տարածքի միաւոր:
4. Մայրական սնունդ: Հակառակ՝ ստեղծուած առաջին կինը: 609:
5. Իրերայաջորդ տառեր: 530: Հակառակ՝ սրածայր փայտ: 7007:
6. Հայկական ծագում ունեցող օղանաւի մակնիշ: Լեւոն Շանթի երկերէն՝ «..... Մարդը»: 2070:
7. Սահման: Ողբալ:
8. Խառնատառ՝ հրագոյն մոլորակ: Լեցուն:
9. Հակառակ՝ 3050: Յոգնակի՝ արական կոչական բառ: Գրաբար՝ եղիր:
10. Երկբարբառ: 437: Հակառակ՝ միացող ածուխ:
11. Կրկնուած բաղաձայններ: Միացո՛ւր: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Կրկնուած ձայնաւորներ:
12. 1975-ին աշխարհի երկրորդ եւ Եւրոպայի առաջին երկիրը, որ պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: Կրկնուած բաղաձայններ:


### Ուղղահայեաց

1. Այնթապի մէջ գտնուող հայկական եկեղեցի, որ ներկայիս վերածուած է մզկիթի:
2. 15 Ապրիլ 1915Էն 16 Մայիս երկարող հայկական հերոսամարտ:
3. Կեանքէն առնուած օրինակ, պատկեր: Հակառակ՝ ծառի կոճը:
4. Յունուար 1920-Էն մինչեւ 12 Փետրուար երկարող հերոսամարտ: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Կրկնուած բաղաձայններ:
5. Հակառակ՝ 75: Հայոց Ցեղասպանութեան զոհ գացած մտաւորական:
6. Սուրիոյ քաղաքներէն, ուր շարդէն ազատած մեծ թիւով հայեր ապաստան գտած են:
7. Մշոյ մէջ աւերակ դարձած նշանաւոր սուրբ վանք: Տառի մը անունը:
8. Հակառակ՝ սուգի գոյն: ՄԵԿը: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
9. 1919-ի աշնան ՀՀԴ-ի 9-րդ ժողովին որոշուած վրիժառու գործողութիւն: Անձնական դերանուն:
10. Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ 4030:
11. Ֆրանց Վերֆելի վէպը. «..... քառասուն օրերը»:
12. Իրերայաջորդ տառեր: 15 Մարտ 1921-ին Թալիսաֆ փաշային սպանող վրիժառու բազուկին մականունը:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻՆ 386)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ս	ի	զ	ա	պ	ա	ն	ծ	տ	է	ր	
2	ե	ա	ն	ճ	ի	տ	ե	լ	ր	ո		
3	ր	ա	լ	ն	ե					ա	պ	
4	ո	ր	ա	կ	ե	լ	ն	ո	ւ	ն	է	
5	բ	ա	ր	ե	լ	ա	ւ	ե	լ			
6	ա	ն				ո	ղ		փ	ո	թ	
7	ղ	ա	ւ	ա			ո		ա		ե	
8	բ	ա	ն	ա	հ	ի	ւ	ս	ո	ա	հ	
9	ի				ա	ն	ի	ծ	ա	ն	ր	
10	ւ	հ		ն	ի	զ	ո	հ	ն	ա		
11	ո	օ	զ	ն	ա	ո	ո	ե	ա	ն		
12	տ	ո	ր	բ	ա	ն	զ	ե	ղ			

ԼՈՒՐԵՐ



## ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Գառնիկ քիչ. Չափանեան:

Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպարաց դասը, գլխաւորութեամբ՝ դպարապետ բարշ. Սարգիս սրկ. Սարգիսեանի: Ս. Յարութեան տօնի խորհրդաւոր շարականներով, հաւատացեալներուն հոգիները աստուածային օրհնութեամբ համակուեցան:

Հունկ, Սրբազան Հայրը հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը, բնաբան ունենալով Յովհաննու Աւետարանի 6-րդ գլխու 69-րդ համարը.



«Տէր, որո՞ն եղթանք. յաւիտենական կեանք տուող խօսքերը Դ՛ուն ունիս»: Սրբազան Հայրը յայտնեց, թէ այսօր անգամ մը եւս բերկանքով եւ հոգեկան ցնծութեամբ կը տօնենք Զրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնը, այն տօնը, երբ Տէրը եկաւ ամբողջացնելու Աստուծոյ փրկագործա-



կան ծրագիրը եւ յաւիտենական կեանքի ճանապարհը բանալու մեր առջեւ: Սրբազան Հայրը հաստատեց, թէ Յարութեան առաւօտը Տիրոջ միանալու, Զրիստոսի աշակերտելու եւ մեր յոյսն ու հաւատքը վերականգնելու հրաւեր մըն է իւրաքանչիւրիս համար:

Պատգամի աւարտին, Ս. Յարութեան տօնին առիթով, Սրբազան Հայրը Բերիոյ Հայոց Թեմի ժողովականութեան, ժողովուրդին անունով եւ անձնապէս որդիական սերն ու երախտագիտութիւնը յայտնեց ՆՍՕՏՏ Արամ



Ա. Վեհափառ Հայրապետին, մաղթելով արեւշատութեամբ լեցուն ծաղկուն հայրապետական ծառայութիւն: Ան շնորհաւորեց Թեմի ազգային մարմինները, հոգեւորականները, Սուրբոյ տարբեր շրջաններու եւ Հայէպի մեր ժողովուրդի գաւակները, որոնք նուիրուածութեամբ կը պահեն քրիստոնէական հաւատքը եւ մեր ազգային արժէքները:

Պատարագէն ետք, դպարաց դասի «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ, Առաջնորդ Սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ դէպի Ազգ. Առաջնորդարան, որուն սեմին դպարաց դասին առաջնորդութեամբ հնչեց «Կի-

լիկի» մաղթերգը եւ եպիսկոպոսական մաղթանք, ապա Հայաստանի Հանրապետութեան քայլերգը:

Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագէն ետք շնորհաւորական այցելութիւններ ընդունեց, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, ներկայութեամբ՝ Սուրբոյ Խորհրդարանի Երեսփոխան տիար Ժիրայր Րէսեանի, Բերիոյ Հայոց Թեմի Երեսփոխանական Ժողովին, Ազգ. Վարչութեան եւ Կրօնական Ժողովի ներկայացուցիչներուն եւ ազգային գործիչներուն:



Սրբազան Հօր այցելեցին եւ Ս. Յարութեան տօնին առիթով իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին քրիստոնէայ համայնքապետներ, հոգեւորականներ, ՀՀ Հայէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդականը, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբի ներկայացուցիչները, բարեսիրական կազմակերպութիւններու, հալէպահայ կազմակերպութիւններու, ազգային մարմիններու, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու եւ հաստատութիւններու, ինչպէս նաեւ քոյր յարանաւանութիւններու ներկայացուցիչներ, եկեղեցիներու թաղական խորհուրդներ, դպրաց դասեր եւ ժողովուրդի գաւակներ, որոնք իրենց ջերմագին բարեմաղթութիւնները փոխանցեցին Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմի ժողովականութեան:



Սրբազան Հօր այցելեցին եւ Ս. Յարութեան տօնին առիթով իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին նաեւ պետական եւ ապահովական բարձրաստիճան պատասխանատուներ:

Այցելուները իրենց շնորհաւորական բարեմաղթութիւնները փոխանցեցին Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմի ժողովականութեան, մաղթելով արեւշատ եւ ծաղկուն օրեր սուրիական հայրենիքէն ներս:

Սրբազան Հայրը անգամ մը եւս վերահաստատեց սուրիահայութեան կառչածութիւնը սուրիական հայրենիքին եւ անոր ամբողջականութեան:



Ան այս առիթով այցելուներուն մաղթեց, որ մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Զրիստոսի Ս. Յարութեան տօնը խաղաղ եւ բարեբեր օրեր պարգւէ Սուրբոյ ժողովուրդին:

Յիշեմք, որ հեռաձայնային կապով Սուրբոյ գանազան շրջաններէն պետական անձնաւորութիւններ, հոգեւոր պատասխանատուներ, Թեմէն ներս ծառայող հոգեւորականներ եւ թաղական խորհուրդներու ատենապետներ իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին Առաջնորդ Սրբազան Հօր:

ԸՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ  
ՕՐՀՆԵԱԼ Ե ՅԱՐՈՒԹԻՒՆ ԸՐԻՍՏՈՍԻ